ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ռ. ՋԻՋՅԱՆ

Մեր հասարակության՝ անցումային ներկայիս շրջանը հղի է սոցիալ-քաղաքական սուր հակամարտություններով և կոնֆլիկտներով։ Այդ հանգամանքը հրատապ է դարձնում սոցիալական կոնֆլիկտների էության, պատճառների և հատկապես դրանց կարգավորման եղանակների հետազոտությունը։ Այդ տեսակետից արտակարգ նշանակություն ունի XX դ. ամերիկյան սոցիոլոգիական մտքի ուսումնասիրությունը։ Նախ, այն պատճառով, որ XX դ. երկրորդ կեսից ամերիկյան սոցիալական ուսմունքները դարձել են համաշխարհային առաջատարի դեր։ Եվ, երկրորդ, սոցիալական կոնֆլիկտների կարգավորմանը նվիրված այն բազմաթիվ հետազոտությունները, որ լույս տեսան ԱՄՆ-ում վերջին երկու տասնամյակներին, ընդհանրացնում են այն տպավորիչ հաջողությունները և փորձը, որին հասել է ամերիկյան հասարակությունը սոցիալական կոնֆլիկտների կարգավորման ասպարեզում։

Բայց նույնիսկ այսօրվա կայուն և բարգավաճող ամերիկյան հասարակությունը չի կարող լիովին ձերբազատվել սոցիալական կոնֆլիկտներից։ Ինչպես ընդգծում է Ջ. Պենը, «հասարակությունը առանց շահերի սուր բախումների ավելի մեծ ուտոպիա է, քան անդասակարգ հասարակությունը»[1]։ Որպես զարգացած երկրների հասարակական կյանքը բնորոշող սոցիալական կոնֆլիկտներ նա նշում է շահերի այն հակադրությունները, որ տեղի ունեն ձեռնարկատերերի և աշխատավորների, վաճառողների և գնորդների, արհմիությունների և հասարակության, բորսային սպեկուլյանտների և ազնիվ մարդկանց, պետական՝ ֆինանսական համակարգի և հարկատուների միջև և այլն։ Այնպես, որ ամերիկյան սոցիալական մտքը, ինչպես սոցիալական միտքը ընդհանրապես, իր ձևավորման տարիներից մինչև ամենահեռավոր ապագան գործ է ունեցել և ունենալու է սոցիալական կոնֆլիկտների հետ։ Որպես այդ մտքի հաստատում նշենք, որ ամերիկյան հասարակության՝ 60-ական թվականների սոցիալական կոնֆլիկտների հետազոտությանը նվիրված գրքերից մեկում ձևակերպվել է հետևյալ ենթավերնագիրը. «Հանցագործությունը՝ ամերիկյան ապրելակերպ»[2]։

Ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական մտքի պատմությանը բնորոշ է եղել, մի կողմից, էմպիրիկ մոտեցումը սոցիոլոգիական հետազոտություններին, մյուս կողմից՝ հասարակական-պետական հաստատությունների, ինստիտուտների դերի կարևորումը հասարակական կյանքում։ Էմպիրիկ սոցիոլոգիայի ասպարեզում Միացյալ Նահանգները մշտապես եղել են համաշխարհային առաջատարի դերում։ Արդեն XX դ. առաջին տասնամյակներին Միացյալ Նահանգներում իրագործվել են սոցիոլոգիական-հետազոտական մոտ 3000 ծրագրեր։ Ավելին, սոցիոլոգիայի առաջին համալսարանական ամբիոնը նույնպես հիմնվել է ԱՄՆ-ում՝ Չիկագոյի համալսարանում, 1892 թ., և արդեն 1901 թ. սոցիոլոգիան դասավանդվել է ամերիկյան 189 համալսարաններում[3]։ Ամերիկյան սոցիոլոգիան իր առաջին քայ-

---

[1] J. Pen. Harmony and Conflict in Modern Society, London. 1966, p. 277.

[2] Social Controversy. Ed. by W. Petersen and D. Matza. Belmont, 1963, p. 94.

[3] История буржуазной социологии первой половины XX века, М., 1979, с. 15.

լերից նպաստակաուղղված էր դեպի հասարակական կյանքի ախտերի բուժումը՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես աղքատությունը, գործազրկությունը, քրեական հանցագործությունները և այլն։

Դարասկզբին ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական մտքի ձևավորման փուլում մեծ ճեղքվածք գոյություն ուներ սոցիալ-տեսական ուսմունքների և էմպիրիկ-սոցիոլոգիական հետազոտությունների միջև։ Այդ թերության վերացմանը նպաստեց ռեֆորմների միջոցով ամերիկյան հասարակագիտական մտքի ուղղվածությունը դեպի երկրի սոցիալական կարգավորումը[4]։ Ռեֆորմիզմը որպես ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական մտքի կարևորագույն նպատակ է աղդարարել դեռևս Լեսթեր Ուորդը (1841—1913)։ Տեսական սոցիոլոգիան հասարակական կյանքի ռեֆորմներին ծառայեցնելու նպատակով էմպիրիկ նյութերը լայնորեն կիրառում էին ամերիկյան սոցիալական մտքի հայտնի դեմքերը, ինչպես Է. Ռոսը, Ու. Սամները, Ռ. Թոմասը, Ֆ. Գիդինգը, Ռ. Փարքը, Է. Բերջեսը և ուրիշներ։ Ուրեմն, սոցիալական կոնֆլիկտների էության և դրանց կարգավորման խնդիրը ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական մտքի համար առաջնահերթ ու կարևորագույն հիմնահարցերից մեկը պետք է դառնար։ Եվ իրոք, ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական մտքի մեծագույն նվաճումներն են սոցիալական կոնֆլիկտների կարգավորման և դրա շնորհիվ համերաշխ ու կայուն հասարակական կյանքի կազմավորման գաղափարները և ուսմունքները։

Սոցիալ-փիլիսոփայական մտքի պատմության մեջ սոցիալական կոնֆլիկտների գնահատականը կարելի է բաժանել երկու մեծ խմբի։ Դեռևս սոցիոլոգիայի «հայրը»՝ ֆրանսիացի մեծ մտածող Օգյուստ Կոնտը (1798—1857) առաջ էր քաշել այն տեսակետը, որ սոցիալական կոնֆլիկտները, խռովությունները, հեղափոխությունները սոցիալական օրգանիզմի հիվանդություններ են, հիվանդագին վիճակներ, շեղումներ հասարակական կյանքի բնականոն ընթացքից։ Կոնտի հետևորդները, ի դեմս սոցիալ-դարվինիզմի, այդ ուղղության հիմնադիր ավստրիացի սոցիոլոգ Լյուդվիգ Գումպլովիչի (1838—1909), սոցիալական կոնֆլիկտների հիմնահարցը դարձրին իրենց ուսմունքի առանցքը, բայց հանգեցին սոցիալական կոնֆլիկտների դերի հակադիր գնահատականին. սոցիալական կոնֆլիկտները ոչ թե հիվանդագին շեղումներ են, այլ հասարակական կյանքի բնականոն վիճակը և գործընթացն են ներկայացնում։ Դարվինի ուսմունքը տարածելով մարդկային հասարակության մեջ գործող հարաբերությունների վրա՝ սոցիալ-դարվինիստները պնդեցին, որ հասարակական կյանքի ամենաբնորոշ կողմը կյանքի պայքարն է մարդկային խմբերի միջև, որի հետևանքով հաղթում և գոյատևում են ուժեղները, հասարակական կյանքին առավել հարմարվածները։ Իսկ այստեղից էլ հետևում է մի կարևոր սոցիալ-քաղաքական եզրակացություն. հասարակությունում համերաշխ և խաղաղ կյանք է հաստատվում միայն այն դեպքում, երբ ուժեղ սոցիալական խավերը կարողանում են իրենց կամքը և իշխանությունը պարտադրել բոլոր մնացած խմբերին, ողջ հասարակությանը. այս տեսակետը կարծես թե մերժվեց արևմտյան զարգացած երկրների՝ XX դ. սոցիալական պատմության կողմից։ Ներկայիս արևմտյան հասարակությունը համերաշխ և կայուն սոցիալ-տնտեսական կյանք է վայելում, բայց այդ կարգավիճակը ուժեղ խմբերի բռնության շնորհիվ չի հաստատվել։ Ցավոք, այլ երկրների պատմությունը, հատկապես նախկին խորհրդային հանրապետությունների ծայրաստիճան անկայուն և պայթյունավտանգ սոցիալական ներկա վիճակը, կարծես թե հաստատում են սոցիալ-դարվինիզմի եզրակացությունը և տանում դեպի «ուժեղ ձեռքի» իշխանությունը։

---

[4] A. Obershall, The Institutionalization of American Sociology (The Establishment of Empirical Sociology, New York, 1972, p. 227).

Ըստ էության, սոցիալ-դարվինիզմին մոտ է նաև մարքսիստական տեսակետը, քանի որ ըստ մարքսիզմի նույնպես հասարակական կյանքը և առաջընթացը պայմանավորված են սոցիալական անհաշտ կոնֆլիկտներով, որոնք ծավալվում՝ են դասակարգերի միջև։ Բայց մարքսիստական տեսակետը ավելի ծայրահեղական է. սոցիալական կոնֆլիկտը, պայքարը դասակարգերի միջև ոչ միայն հասարակական կյանքի առանցքն է, այլ նաև պատմության շարժիչ ուժը, այն միջոցը, որի շնորհիվ իրականանում է հասարակական առաջընթացը։ Այլ խոսքով, ըստ մարքսիստական տեսակետի, սոցիալական կոնֆլիկտները ոչ թե պետք է կարգավորվեն, այլ ծայրաստիճան սրվեն և հասցվեն սոցիալական հեղափոխության։ Այսինքն, մարքսիզմի համար անընդունելի է ռեֆորմիզմը որպես հասարակական կյանքի կարգավորման և սոցիալական առաջընթացի ապահովման միջոց։ Նշված տեսակետից ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական մտքի հիմնական ռեֆորմատորական ուղղվածությունը եղել է հակամարքսիստական։ Ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական մտքի պատմության ու հասարակական կյանքի ռեալ ընթացքի կարևորագույն և ուսանելի հիմնական եզրակացությունը հետևյալն է. համերաշխ և բարգավաճող հասարակություն կարելի է կառուցել ոչ թե կործանիչ սոցիալական հեղափոխությունների, այլ պետության, ողջ հասարակության կողմից մշակվող և իրագործվող նպատակասլաց սոցիալական ռեֆորմների միջոցով։

ԱՄՆ-ի սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական մտքի ներկայացուցիչների կարծիքով ռեֆորմիզմի տարածման հիմնական գործոնը դասակարգի կապիտալիզմին բնորոշ կործանարար ու ավերիչ սոցիալական կոնֆլիկտները պետական մակարդակով հաղթահարելու գիտակցված հասարակական պահանջն է։ Տեղին է նշել, որ ԱՄՆ-ի ղեկավար խավերի այդ տեսակետի ձևավորմանը որոշ բացասական առումով «նպաստել» է նաև մարքսիզմ-լենինիզմը։ Ինչպես նշել են մի շարք հեղինակներ, դեպի ռեֆորմիզմը ամերիկյան պետական գործիչներին և գաղափարախոսներին մղել է նաև 1917 թ. ռուսական ավերիչ հեղափոխությունը, որի գաղափարախոսությունը մարքս-լենինյան ուսմունքն էր[5]։

Ամերիկյան սոցիալական մտքի ռեֆորմատորական ուղղվածության հիմքը կազմում է հասարակական-տնտեսական և պետական-քաղաքական հաստատությունների տեսությունը, որը մշակել էին գերմանացի հայտնի սոցիոլոգ Մաքս Վեբերը (1864—1920) և նրա հետևորդները։ Չմերժելով մարքսիստական այն դրույթը, որ տնտեսությունը կարևորագույն դեր է խաղում հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում, Մ. Վեբերը հակադրվեց մարքսյան տնտեսական միակ գործոնի գաղափարին, ընդգծելով այնպիսի կարևորագույն գործոնների դերը, ինչպիսիք են գաղափարախոսությունը, եկեղեցին և պետությունը։ Պետական և հասարակական հաստատությունները, ձևավորվելով հասարակության երկարատև էվոլյուցիայի ընթացքում, հետագայում ձեռք են բերում անհերքելի ինքնուրույնություն և իրենց գործողությունների, նորմերի ու կանոնների շնորհիվ հասարակության անդամներին պարտադրում են որոշակի վարք և կարգավորվածություն։ Հասարակական և հատկապես պետական հաստատությունների ու կառուցվածքների ճշգրիտ ընկալումը, բնական է, պետք է ծնունդ տար և հիմնավորեր այն գաղափարը, որ սոցիալական կոնֆլիկտների կարգավորման գործում կարևոր դեր կարող՝են խաղալ պետությունը և հասարակական կառուցվածքները ընդհանրապես։

Ինստիտուցիոնալիզմի գաղափարը ԱՄՆ-ում ընդունվեց և հետագա տարածում ստացավ հայտնի սոցիոլոգ Թոմաս Վեբլենի (1857—1929) աշխատությունների շնորհիվ։ Սոցիալական կյանքի, գործողությունների և

[5] J. Pen, Harmony..., p. 54.

կոնֆլիկտների հիմքում Թ. Վերլենը տեսնում է սոցիալական նպատակներին հասնելու մարդկային բնազդը։ Ձգտելով իրագործել նախանշված նպատակները, մարդիկ, բնականաբար, ստիպված են լինում մրցակցել, որն էլ հաճախ հանգեցնում է սոցիալական կոնֆլիկտների[6]։

Ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական մտքի հայտնի ներկայացուցիչներից մեկը, Պիտիրիմ Սորոկինը (1889—1968) շեշտել է սոցիալական կոնֆլիկտների կարգավորման մի այլ կարևոր գործոն՝ հոգևոր արժեքները։ Ձգտելով մշակել մարդկային հասարակության պատմության ընդհանուր տեսություն, այդ թվում նաև սոցիալական հեղափոխությունների տեսություն, Պ. Սորոկինը եկավ այն եզրակացության, որ սոցիալական հեղափոխությունները հնարավոր է էապես մեղմել, եթե դրանց հակադրվեն հոգևոր հեղափոխությունը, մարդկանց սոցիալ-մշակութային ինտեգրացումը։ Հասարակական կյանքը Պ. Սորոկինը ձգտում էր բացատրել փոխազդեցության գաղափարի միջոցով. «Փոխազդեցության գործընթացները այն թելերն են, որոնցից հյուսվում է մարդկության պատմության պատկերը։ Փոխներգործության հարաբերության հիման վրա են տարրալուծվում բոլոր սոցիալական հարաբերությունները սկսած արտադրական ու տնտեսական հարաբերություններից և վերջացրած կրոնական, իրավական ու գիտական հարաբերություններով»[7]։

Սոցիոլոգիական իր ընդհանուր ուսմունքից Պ. Սորոկինը հանգում է այն եզրակացության, որ անհավասարությունը և հակամարտությունը հասարակության մեջ հավերժական են։ Փոփոխվում են միայն անհավասարության ու հակամարտության ձևերն ու եղանակները։ Մարդկանց միջև անհավասարությունը մշտական է այն պատճառով, որ մարդիկ անհավասար են իրենց բնածին ֆիզիկական և մտավոր կարողություններով[8]։

Պ. Սորոկինի ուսմունքի որոշ դրույթները ընդունվել և զարգացվել են «սոցիալական վերահսկողության» տեսության հիմնադիրներից մեկի՝ Էդուարդ Ռոսի (1866—1951) գործերում։ Շատ արդիական և համոզիչ է հնչում Է. Ռոսի տեսակետը այն մասին, թե ինչպես են ժամանակակից հասարակության մեջ հաստատվում հասարակական կարգը և նոր իշխանությունը։ Դրա հիմքը ակտիվ և համախմբված սոցիալական խմբերն են։ Ռոանդուն պայքարի շնորհիվ միաձուլված քաղաքական խմբերին հաջողվում է իրենց վերահսկողությունը հաստատել ողջ հասարակության վրա և նվաճել պետական իշխանություն։ Յուրահատուկ է ամերիկացի գիտնականի դիրքորոշումը նաև սոցիալական կոնֆլիկտների մեկնաբանության հարցում։ Ըստ Է. Ռոսի, կոնֆլիկտների աղբյուրը անհատներն են, անարխիստական և հակամարտության նրանց հակումները։ Իսկ հակամարտությունների կարգավորումը իրականացվում է հասարակական կառուցվածքների և հաստատությունների կողմից, որոնք վերահսկում և ուղղորդում են անհատների սոցիալական վարքը և գործողությունները։

Ամերիկյան սոցիալական մտքի գագաթնակետը, որով ԱՄՆ-ի գիտնականները ոչ միայն հարստացրին համաշխարհային սոցիոլոգիան, այլ նաև ստեղծեցին XX դ. երկրորդ կեսի ամենաազդեցիկ սոցիոլոգիական ուղղությունը՝ Տալկոտ Պարսոնսի (1902—1979) կառուցվածքային ֆունկցիոնալիզմն է։ Տ. Պարսոնսի ուսմունքի կարևորագույն սկզբունքներից մեկն այն է, որ հասարակությունը փոխներգործող ուժերի հավասարակշռություն է, այդ հավասարակշռությամբ պայմանավորված կարգավիճակ։ Դա նշանակում է, որ հասարակության կյանքում գլխավորը հասարակական խմբերի և ուժերի համագործակցությունն է, իսկ կոնֆլիկտը, ապակայունացնող հակամարտությունը մնում են հետին պլանում, համարվում երկրորդական։

---

[6] И. И. Антонович, Буржуазная социологическая теория, М., 1933, с. 46.

[7] П. Сорокин, Система социологии, т. I, Петроград, 1920, с. 320.

[8] P. Sorokin, Social and Cultural Mobility, New York, 1964, p. 337.

Ով չի մոռացել XIX դ. կապիտալիզմի պատմությունը, XX դ. սկզբի համաշխարհային պատերազմը, Եվրոպայից մինչև Չինաստան բռնկված սոցիալական հեղափոխությունները և քաղաքացիական պատերազմները, նրա համար Տ. Պարսոնսի հավասարակշռության կոնցեպցիան չի կարող համոզիչ հնչել։ Բայց բանն այն է, որ խոսքը վերաբերում է XX դ. 30—40-ական թվականների Միացյալ Նահանգներին, որն արդեն հաղթահարել էր «մեծ ճգնաժամի» դժվարությունները և պրեզիդենտ Ռուզվելտի «նոր ծրագրով» ղեկավարվելով, իրոք, ոտք էր դրել կայուն զարգացման պատմական նոր փուլը։

Տ. Պարսոնսի տեսությունը էապես նպաստեց ամերիկյան հասարակության մեջ այն տեսակետի գերակշռությանը, որի համաձայն հասարակական հավասարակշռության ապահովման և սոցիալական կոնֆլիկտների հաղթահարման հիմնական օղակը պետությունն է։ Պետությունը իր հատուկ հաստատությունների միջոցով պետք է ուշադիր հետևի առավել գործուն և հզոր ուժերի փոխազդեցություններին ու մշտապես մշակի դրանց հավասարակշռությունը պահպանող միջոցներ, ծրագրեր, ռեֆորմներ[9]։ Հետխորհրդային հասարակության ներկայիս անցումային փուլի տեսանկյունից հատկապես ուշագրավ և ուսանելի է Պարսոնսի այն միտքը, որ հասարակական կյանքի հաստատությունն ու հավասարակշռությունը հիմնված են պետական կայուն օրենքների և դրանց անվերապահ կատարման վրա։ Օրինապահության արտակարգ դերը մեր օրերում առավել ևս շեշտվում է այն հանգամանքով, որ հասարակությունը հեղեղվել է հանցագործություններով, և կազմակերպված հանցաշխարհը սկսել է հավակնել իրական իշխանության։

60-ական թվականներին ԱՄՆ-ում ձևավորվեց և լայն տարածում ստացավ «ինդուստրիալ հասարակության» կոնցեպցիան։ Այն հայտարարեց և հավաստեց հին, «վատ կապիտալիզմի» վախճանը և նոր, «լավ» կապիտալիզմի ծնունդը, որն այնքան արմատապես է տարբերվում հին կապիտալիզմից, որ դրա հանդեպ «կապիտալիզմ» տերմինն օգտագործելը սխալ է և ճիշտը «ինդուստրիալ հասարակություն» անվանումն է։ Այդ գաղափարի հիմնական փաստարկը հետևյալն էր. հին կապիտալիզմի ամենաբնորոշ գծերն էին կապիտալի և աշխատանքի միջև կոնֆլիկտը, բանվոր դասակարգի անխնա շահագործումը, սոցիալական ծայրաստիճան անհավասարությունը։ «Ինդուստրիալ հասարակությունում»՝ «լավ կապիտալիզմի» փուլում, սոցիալական սուր հակամարտության այդ պատճառները հիմնականում հաղթահարվում են, որի շնորհիվ էլ հասարակության մեջ հաստատվում և գերիշխում են համերաշխ համագործակցության հարաբերությունները։

Սոցիալական սուր կոնֆլիկտները սնող անհավասարության վերացմանը նպաստեցին մի շարք հանգամանքներ, որոնցից նշենք հատկապես հետևյալը. նախ, կապիտալիստական ֆիրմաների ղեկավարները և ամենամեծ եկամուտների տեր մարդիկ դարձան մասնագետ մենեջերներ՝ փոխարինելով այդ դիրքերում կապիտալիստական հարստությունների տերերին։ Այսինքն, կապիտալիստական տնտեսության ղեկավարումը կապիտալիստների ձեռքից անցավ մենեջերների ձեռքը։ Նույնը տեղի ունեցավ քաղաքական ասպարեզում։ Կապիտալիստների դրածոների փոխարեն պետության և կառավարության գլուխ կանգնեցին հզոր կուսակցությունների ղեկավարները, որոնք առաջատարի դերը նվաճում էին անհատականության ու մտքի շնորհիվ և ոչ թե կապիտալիստների քսակների օգնությամբ։

«Ինդուստրիալ» և «հետինդուստրիալ» հասարակության գաղափարախոսների՝ Ռ. Արոնի, Պ. Լազարսֆելդի, Ռ. Դարենդորֆի, Ու. Ռոստոուի,

---

[9] T. Parsons, The Social System, New York, 1951, p. 105—110.

Դ. Բոուլդինգի և այլոց եզրակացությունը սոցիալական կոնֆլիկտների վերաբերյալ բավականաչափ միանշանակ է։ Կապիտալիստական հասարակության գլխավոր սոցիալական կոնֆլիկտը՝ կոնֆլիկտը կապիտալիստների և բանվոր դասակարգի միջև, հաջողվել է կարգավորել, սահմանափակել այնքանով, որ այն այլևս չի հանգեցնում հասարակության բոլոր ուժերը կլանող և կաշկանդող անհաշտ հակամարտության[10]։ Իսկ դա նշանակում է, որ կապիտալիստական հասարակությանը զարգացման նոր կյանք է տալիս հաջողվել է հաղթահարել սոցիալական կոնֆլիկտների ամենագլխավոր պատճառը։ Ընդ որում նպատակասլաց ռեֆորմների միջոցով համերաշխ հասարակության ստեղծումը համընդհանուր կիրառություն կարող է ստանալ բոլոր հասարակարգերի, բոլոր ժողովուրդների և ժամանակների համար։

Սոցիալական կոնֆլիկտների կարգավորման առումով սոցիոլոգիական ուսմունքները, ներառյալ Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմը և նրա հետևորդների հետազոտությունները, գրավել են «պաշտպանողական» դիրք։ Հիմնական գաղափարը եղել է այն, որ պետք է ուշադիր հետևել կոնֆլիկտներ հարուցող առավել ազդեցիկ գործոններին և միջոցներ, ծրագրեր մշակել այդ գործոնների ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ։ Հասարակական կյանքի կարգավորման նոր մոտեցում մշակվեց 50-ական թվականներին «նոր սոցիոլոգիայի» ուղղության մեջ, որի հիմնադիրը ամերիկացի սոցիոլոգ Ու. Ռ. Միլսն է։ «Նոր սոցիոլոգիայի» տեսության համաձայն, սոցիոլոգիան պետք է առաջ ընկնի կյանքից, տեսական մտքի թռիչքի և ստեղծագործական երևակայության շնորհիվ մշակի հասարակության առաջընթացի ու կյանքի կարգավորման նոր և արդյունավետ, հեռանկարային ուղիներ[11]։

Սոցիալական կոնֆլիկտների իմաստավորմանը նոր երանգ տվեց նույն ժամանակակից հայտնի սոցիոլոգ Ջոն Գելբրեյտի «առատության հասարակության» տեսությունը, որի հիմքում այն անհերքելի փաստերի դիտակցումն է, որ ամերիկյան հասարակությունը վերջին տասնամյակներին հասել է տնտեսության կայունության, սոցիալական համերաշխության և բարգավաճ ապրելակերպի։ Սոցիալական կոնֆլիկտների բնույթի քննության տեսանկյունից ուշագրավ է Գելբրեյտի հետևյալ դիտողությունը. կապիտալիստներին և մեծահարուստներին այնքան են քննադատել, որ հարստությունը սկսում է ընկալվել որպես բացասական երևույթ։ Բայց աղքատները պայքարել են հարուստների դեմ ոչ թե այն պատճառով, որ մերժել են հարստությունը, այլ որովհետև ցանկացել են տիրանալ ունևոր խավերի հարստությանը, ձեռք բերել այդ հարստությամբ ապահովվող սոցիալական արտոնությունները[12]։

Ինչպես վերը նշեցինք, ամերիկյան սոցիալական մտքի կարևոր միտումներից մեկը եղել է ընդհանուր սոցիոլոգիական տեսությունների և էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտությունների միջև եղած ճեղքվածքը վերացնելու ձգտումը։ Դրա արդյունքներից կարելի է համարել Ռոբերտ Մերտոնի «Ֆունկցիոնալ միասնության» տեսությունը, որը, մի կողմից, շարունակում է զարգացնել Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմը, մյուս կողմից, «միջին շառավիղի» տեսությունների միջոցով ձգտում է հասնել սոցիալական կյանքում կիրառելի արդյունքների։

Ռ. Մերտոնի տեսությունում նկատելի տեղ է հատկացվում սոցիալ-մշակութային արժեքներին։ Անհատների հասարակական գործունեության մեջ ամենաորոշիչը երկու գործոններ են՝ տվյալ հասարակության մշակութային ավանդույթներով պայմանավորված նպատակները և հասարակա-

---

[10] D. Bell, The Coming of Post-industrial Society. New York, 1973, p. 115.
[11] New Sociology. New York. 1964
[12] J. Galbraith. The Affluent Society. New York, 1969, p. 10-29.

կան կառուցվածքներով ու հաստատություններով ապահովված կենսագործունեության նորմերը։ Հակահասարակական վարքը և համապատասխան սոցիալական կոնֆլիկտները տեղի են ունենում այն դեպքում, երբ խախտվում է հավասարակշռությունը այս գործոնների միջև։ Ըստ Ռ. Մերտոնի, հակահասարակական վարքը պետք է դիտարկվի որպես ճեղքվածք մշակույթով պայմանավորված հավակնությունների և այդ ձգտումներն իրականացնելու սոցիալական հնարավորությունների միջև։ Ինչպես նշում են որոշ հետազոտողներ, այս տեսակետից ամերիկյան հասարակությունը հավասարակշռված չէ։ Ամերիկյան սոցիալ-մշակութային ավանդույթները երիտասարդների մեջ ձևավորում են ամենամեծ հաջողությունների հասնելու նպատակներ, բայց սոցիալական իրականությունը չափազանց սահմանափակ հնարավորություններ է ընձեռում այդ նպատակներին հասնելու համար։ Ընդհարվելով կյանքի իրողություններին, չտեսնելով իր նպատակներին հասնելու օրինական ուղին, երիտասարդ ամերիկացին դիմում է հակահասարակական, նույնիսկ հանցավոր միջոցների։ Ընդհանրացնելով նմանատիպ իրավիճակները՝ Ռ. Մերտոնը գրում է. «Երբ գոյակցային արժեքների համակարգը բնակչության մեծամասնությանը թելադրում է բոլորից բարձր դասել հաջողությունների նվաճումը, իսկ հասարակության սոցիալական կառուցվածքը բնակչության զգալի մասի համար սահմանափակում է այդ նպատակներին հասնելու հնարավորությունները, այդ դեպքում էլ առաջանում և մեծ չափերի է հասնում հակահասարակական վարքագիծը»[13]։

Միացյալ Նահանգների արդի սոցիոլոգիայում բավականաչափ տարածված է Լ. Կոզերի տեսակետը, ըստ որի, սոցիալական կոնֆլիկտները, մշտապես հղի լինելով բացասական և աղետաբեր հետևանքներով, հաճախ հակամարտող կողմերին ու ողջ հասարակությանը հասցնելով ծանր կորուստներ, այնուամենայնիվ, որոշ դրական դեր են կատարում հասարակական կյանքում։ Ինչպես արտահայտվում են Դ. Պրուիտը և Ջ. Ռուբինը, «կոնֆլիկտը այն հողն է, որը սնում է սոցիալական զարդացումը»[14]։ Ջ. Պենը իր մենագրությունում սոցիալական կոնֆլիկտների դրական նշանակության մասին գրում է. «Նույնիսկ կողմնակից չլինելով դիալեկտիկական մատերիալիզմի տարօրինակ մետաֆիզիկային, կարելի է միանալ այն կարծիքին, որ սոցիալական զարգացման և առաջընթացի մի մասը պետք է վերագրվի սոցիալական կոնֆլիկտներին»[15]։ Գիտակցելով սոցիալական որոշ իրավիճակի անբարդությունը և անիմաստությունը՝ անհատներն ու սոցիալական խմբերը մտնում են սուր պայքարի մեջ, որն էլ ուշ թե շուտ հանգեցնում է սոցիալական համապատասխան փոփոխությունների։

Ավելին, այս տեսակետի կողմնակիցները նույնիսկ գտնում են, որ կոնֆլիկտը նպաստում է հակամարտող կողմերի հաշտեցմանը։ Նրանց փաստարկը հետևյալն է։ Եթե հակադիր կողմերին թույլ չտրվի արտահայտել տեփական տեսակետները և փոխադարձ պահանջները, ապա նրանց հակադրվածությունը այդպես էլ չի վերանա։ Իսկ կոնֆլիկտի և հակամարտության շնորհիվ պայքարող կողմերը ի վերջո գալիս են երկու կողմերին բավարարող լուծման, որն էլ հաշտեցնում է նախկին հակառակորդներին։ Իրոք, կարծես թե ակնհայտ է, որ հաշտությունը կայանում է կոնֆլիկտի շնորհիվ։

Նշված փաստարկները հիմնավորված են, բայց լուրջ ճշգրտման կարիք ունեն։ Բանն այն է, որ և՛ սոցիալական առաջընթացը, և՛ հակամարտ կողմերի հաշտեցումը տեղի են ունենում կոնֆլիկտի հաղթահարման շնորհիվ։ Պատկերացնենք հասարակության վիճակը, եթե դրանում առկա սոցիա-

---

[13] R. Merton. Social Theory and Social Structure. New York. 1968, p. 199.

[14] D. Pruitt, J. Rubin, Social Conflict, New York. 1986. p. 6.

[15] J. Pen, Harmony ... p. 277.

լական կոնֆլիկտը չի հաջողվում կարգավորել և հաղթահարել։ Պարզ է, որ այսպիսի հասարակությանը վիճակված է ոչ թե առաջընթաց, այլ քայքայում և կազմալուծում։ Նույնն է պատկերը նաև երկու հակամարտ ուժերի պայքարի դեպքում։ Եթե նրանց միջև կոնֆլիկտը չհաղթահարվի և չկարգավորվի, ապա, իհարկե, կողմերի հաշտեցման մասին խոսք անգամ լինել չի կարող։

Ցգտելով ցուցադրել կոնֆլիկտի դրական սոցիալական դերը, Դ. Պրուիտը և Ջ. Ռուբինը նշում են նաև, որ կոնֆլիկտը նպաստում է յուրաքանչյուր հակամարտող կողմի, սոցիալական խմբի միասնականության ամրապընդմանը։ Կոնֆլիկտը միաձուլում ու-կոփում է հակամարտ խմբերը, և ընդհակառակը, կոնֆլիկտի դադարեցմամբ թուլանում է խմբերի համախմբվածությունը և ի վերջո հասցնում նրանց կազմալուծմանը։

Այս ամենը այդպես է։ Բայց, նախ, չափից ավելի երկարատև կոնֆլիկտի դեպքում նույնիսկ միաձույլ խմբերը հյուծվում և ուժասպառ են լինում։ Երկրորդ, եթե կոնֆլիկտը հասարակության տվյալ ենթահամակարգի ներսում է կամ էլ ներգրավում է ողջ հասարակությունը, ապա հակամարտող խմբերի միաձուլումը անխուսափելի է և անհաշտ է պայքարը։ Ենթահամակարգի կամ համակարգի համար ամբողջությամբ վերցված պատկերը հակառակն է. որքան միաձուլված և վճռական են պայքարող կողմերը, այնքան ավելի ծանր ու կործանարար են կոնֆլիկտի հետևանքները։ Ի դեպ, Լ. Կոզերն էլ է նշել, որ պնդելով սոցիալական կոնֆլիկտների դրական, ինտեգրատիվ դերը, չի կարելի մոռանալ, որ սոցիալական կոնֆլիկտները մեծ մասամբ կործանարար հետևանքներ են ունենում հասարակության համար[16]։

Այս ճշգրտումը, երբ դրական դերը վերագրվում է ոչ թե բուն կոնֆլիկտին, այլ նրա կարգավորմանը, կարևոր է հետևյալ առումով։ Եթե ընդունվի կոնֆլիկտի դրական գերի համոզմունքը, ապա դա կարող է կամա թե ակամա մղել կոնֆլիկտների սրման և տարածման մտայնությանը, իսկ առաջարկվող ճշգրտումը ի սկզբանե տրամադրում է կոնֆլիկտները կարգավորելու և հաղթահարելու։

Կոնֆլիկտների կարգավորման կարևորության գիտակցումը էապես նպաստեց այն իրողության ձևավորմանը, որ ամերիկյան հասարակության ամենատարբեր ոլորտներում, հատկապես աշխատանքային և ընտանեկան կոնֆլիկտների ասպարեզում, վերջին երկու տասնամյակում պայթյունաձև տարածվեց սոցիալական կոնֆլիկտների պրոֆեսիոնալ կարգավորման շարժումը։ Այն առաջ բերեց սոցիալական կոնֆլիկտների կարգավորման տեսության և մեթոդիկայի մշակման անհրաժեշտություն, որի հետևանքով ԱՄՆ-ում վերջին տասնամյակին լույս տեսան արժեքավոր և ուշագրավ մի շարք մենագրություններ և ժողովածուներ։ Նախքան սոցիալական կոնֆլիկտների կարգավորման ամերիկյան մեթոդիկայի քննությանն անցնելը, տեսնենք, թե ինչ է ներկայացնում «կոնֆլիկտ» կոչվող հակամարտությունը։ Որպես առավել սեղմ և ամփոփիչ սահմանում կարելի է ընդունել հետևյալը՝ սոցիալական կոնֆլիկտը անհամատեղելի սոցիալական շահերով պայմանավորված հակամարտություն է։ Սրանից հետևում են սոցիալական կոնֆլիկտի հիմնական բնորոշ գծերը. երկու և ավելի հակամարտող կողմերի առկայությունը, նրանց ձգտումը՝ վնասազերծել կամ ընդհանրապես վերացնել մեկը մյուսին, կոնֆլիկտային իրավիճակի գիտակցումը հակամարտող ուժերի կողմից, կոնֆլիկտային հակամարտության բացահայտ դրսևորումը, այդ հակամարտության արձանագրման հնարավորությունը և այլն։ Այս սահմանմանը ներդաշնակ են նաև կոնֆլիկտային իրավիճակի բաղադրատարրերի առաջարկված սխեմաները, օրինակ, Ջ. Բերտոնի «միջուկային» մոդելը. կոնֆլիկտի «կարծր միջուկը» կազմում են օբյեկտիվ հակասու-

[16] L. Coser. The Functions of Social Conflict, New York, 1956, p. 5.

թյունները, իսկ միջուկը շրջապատող փափուկ թաղանթը կազմում են սուբյեկտիվ բաղադրատարրերը, ինչպիսիք են թերըմբռնումը, փոխադարձ անվստահությունը, ինֆորմացիայի խեղաթյուրումը, հակառակորդի թշնամական ստերեոտիպի ձևավորումը և այլն[17]։

Ամերիկյան սոցիալական մտքի գործնական ուղղվածությունը առավել ցայտուն է դրսևորվում կոնֆլիկտների հետազոտման և կարգավորման տեսության մեջ, որը կարելի է բնութագրել որպես կիրառական սոցիոլոգիայի հատուկ բնագավառի մեթոդիկա։ Պ. Վեհրը կոնֆլիկտների հետազոտությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակել է կոնֆլիկտային իրավիճակի «քարտեզ կազմելու ուղեցույց», որի համաձայն կոնֆլիկտային իրավիճակը արդյունավետ հետազոտելու համար պետք է դիմել հետևյալ միակերպ քայլերին. կոնֆլիկտի համառոտ նկարագրություն, պատմության արձանագրում, հակամարտության միջավայրի պարզում, հակամարտող ուժերի բնութագրում, հակամարտություն առաջացնող և սնող պատճառների բացահայտում, կոնֆլիկտի ընթացքի «դինամիկայի» արձանագրում, կոնֆլիկտի կարգավորման այլընտրանքային ուղիների մշակում և կարգավորման ներունակ գործոնների բացահայտում[18]։ Պ. Վեհրի այս արժեքավոր սխեման, այնուամենայնիվ, ունի այն էական թերությունը, որ դրա «ուղեցույցը» կառուցված է «խառը ստրատեգիայով». մի կողմից այն հենվում է կոնֆլիկտի ծավալման օբյեկտիվ գործընթացի վրա, մյուս կողմից նկատի ունի տվյալ կոնֆլիկտի սուբյեկտիվ ճանաչման աստիճանները հետազոտողի կողմից։ «Ուղեցույցի» աստիճաններն ավելի հստակ կլինեին, եթե կառուցվեին այդ սկզբունքներից միայն մեկի հիման վրա։ «Օբյեկտիվիստական» ուղեցույցը կկազմվեր հետևյալներից. ա) կոնֆլիկտի «ստատիկա՝ կոնֆլիկտի նախադրյալները և նախապատմությունը, բ) կոնֆլիկտի «դինամիկա՝ կոնֆլիկտային հակամարտության ծավալման պատմության հանգուցակետերը, գ) կոնֆլիկտի մարումը, ինչպես նրա բնական ընթացքի շնորհիվ, այնպես էլ հաշտեցնող ուժերի ջանքերով։ Սուբյեկտիվիստական սկզբունքի կիրառման դեպքում ուղեցույցի աստիճանները հետևյալը կլինեն. ա) կոնֆլիկտի արձանագրում, բ) հակամարտության պատմության հետազոտություն, գ) կոնֆլիկտածին պատճառների բացահայտում, դ) կոնֆլիկտի կարգավորման ջանքերի վերլուծություն։

Ամերիկյան սոցիոլոգների տեսական հետազոտությունները և կոնֆլիկտների կարգավորման փորձը ցույց տվեցին, որ սոցիալական կոնֆլիկտների կարգավորման առավել արդյունավետ և նպատակահարմար ձևը հակամարտող ուժերի հաշտեցումն է երրորդ կողմի միջամտությամբ։ Քանի որ միջնորդի՝ երրորդ կողմի դերը այնքան որոշիչ է սոցիալական կոնֆլիկտների կարգավորման գործում, և նրա գործունեությունը բարդ է ու պատասխանատու, ապա միջնորդի դերում հանդես եկող անհատների և խմբերի հանդեպ որոշակի մեթոդաբանական բնույթի պահանջներ պետք է ներկայացվեն։ Ռ. Ուոլտոնը առանձնացրել է հետևյալ անհատական ու մասնագիտական բնութագրերը, որոնց առկայությունը կարևոր է միջնորդական գործունեություն ծավալելու տեսակետից. ա) կոնֆլիկտների «ախտորոշիչ ընդունակություններ» և կոնֆլիկտների կարգավորման ուղիների մշակման կարողություններ, բ) փակուղային իրավիճակների հաղթահարման և հակամարտող կողմերի կաղապարված փոխհարաբերությունների վերափոխման «վարքագծային արվեստ», գ) անհատական և մասնագիտական այնպիսի հատկություններ, որոնք միջնորդներին ընդունելի են դարձնում հակամարտող կողմերի համար, դ) հակամարտող կողմերին «զգացմունքային օգ-

---

[17] J. W. Burton, Conflict and Communication, London, 1969.

[18] P. Wehr, Conflict Regulation, Boulder, 1979, p. 18—22.

նություն» հասցնելու կարողություն, մասնավորապես, նրանց փոխադարձ վերաբերմունքի բարելավման ուղղությամբ[19]։

Երրորդ կողմի միջնորդական գործունեության կապակցությամբ ամերիկյան սոցիոլոգիայում բավականաչափ տարածված է այս տեսակետը, որ միջնորդը պետք է սահմանափակվի հակամարտող կողմերի միջև բանակցությունների կազմակերպման և բանակցությունների միջոցով կոնֆլիկտը հաղթահարելու հակամարտող կողմերի ջանքերին օժանդակելով։ Այսինքն, միջնորդը, ըստ այդ տեսակետի, չպետք է իր վրա վերցնի կոնֆլիկտը կարգավորելու նախաձեռնությունը, պատասխանատվությունը և ակտիվ քայլերը, այլ պետք է հանդես գա որպես օժանդակ ուժ։ Թվում է, որ այս հարցում պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում։ Եթե կոնֆլիկտը ստացել է ծայրահեղ սուր հակամարտության բնույթ և հակամարտող ուժերը ոչ ոքի չեն վստահում իրենց հիմնահարցի լուծումը, ապա միջնորդին մնում է սահմանափակվել հակամարտ կողմերի միջև բանակցական կամուրջների կառուցմամբ։ Բայց եթե հարաբերությունները հակամարտող կողմերի միջև դեռևս չեն ստացել անհաշտ թշնամանքի ձև, և նրանք կարող են ընդունել որոշ անհատների կամ պաշտոնական հաստատությունների միջնորդությունը, ապա միջնորդները իրավունք ունեն կոնֆլիկտի կարգավորման գործընթացում գրավել ամենաակտիվ դիրքեր։

Վերջին տարիներին ԱՄՆ-ի սոցիոլոգները հատկապես եռանդով են մշակում այսպես կոչված «հետազոտական մոտեցումը» սոցիալական կոնֆլիկտների կարգավորման հարցում։ Այդ մոտեցման համաձայն, կոնֆլիկտը պետք է ընկալվի և՛ միջնորդի, և՛ հակամարտող խմբերի կողմից որպես լուծման ենթակա խնդիր, միջնորդ կողմի հիմնական նպատակը պետք է լինի հակամարտող խմբերում համապատասխան տրամադրվածության ստեղծումը՝ այդ խնդիրը միացյալ ջանքերով հետազոտելու և լուծելու համար[20]։ Որպեսզի այդպիսի համագործակցությունը հնարավոր լինի, միջնորդող կողմը առաջին հերթին պետք է հասնի նրան, որ հակամարտող կողմերը անհաշտ թշնամանքից փորձեն անցնել երկու կողմերի համար էլ ընդունելի լուծման որոնմանը։ Միայն դրանից հետո կարելի է անցնել կոնֆլիկտային հիմնահարցի հետազոտման և ստեղծագործական լուծման փուլին։

Հետազոտական մոտեցման դեպքում երրորդ կողմի գործունեության մեջ Ց. Բերկովիչը առանձնացնում է հետևյալ չորս պահերը. հակամարտ կողմերի միջև փոխադարձ վստահության հաստատումը, ինֆորմացիոն-խթանորոշիչ գործունեությունը, որ ընդգրկվում են նաև հակամարտող կողմերի ներկայացուցիչները, ինտեգրացման փուլը, երբ միջնորդի օժանդակությամբ և խորհուրդներով հակամարտող կողմերը փորձում են ձևակերպել ընդհանուր նպատակներ և մշակել կոնֆլիկտի հաղթահարման ուղիներ, հակամարտող կողմերի միջև ինֆորմացիայի փոխանակման քանակական և որակական բարելավում։

Հետազոտական մոտեցման միջոցով սոցիալական կոնֆլիկտների կարգավորման տեսության և պրակտիկայի ներկա փուլում նկատելի է հետևյալ թերությունը։ Այս մոտեցման դեպքում կարևորագույն պահերից մեկը կոնֆլիկտի կարգավորման գաղափարի մշակումն է։ Դա իր հերթին պահանջում է ստեղծագործական մտքի լարում, խնդիրների լուծման կարողությունների արդյունավետ կիրառում։ Եվ տարօրինակն այն է, որ ամերիկյան կոնֆլիկտաբանները միանգամայն անտեսում են այն կարևոր մեթոդները, որ մշակվել են հենց Միացյալ Նահանգներում՝ հայտնի մեթոդաբաններ Ալեք Օսբորնի և Ուիլյամ Գորդոնի կողմից։ Պետք է հիշատակել «ուղեղային գրոհի» մեթոդը, որն անփոխարինելի է այն դեպքում, երբ խնդրի լուծման

---

[19] R. E. Walton. Interpersonal Peacemaking. Reading. 1969, p. 131.

[20] J. Bercovitch. Social Conflicts and Third Parties, New York, 1973, ch. 2.

գործընթացը հայտնվում է փակուղային վիճակում։ Նման իրավիճակից ելք գտնելու համար կազմվում է տարաբնույթ փորձ ունեցող անհատների խումբ, որն անկաշկանդ մթնոլորտում, խմբային «գրոհով» առաջ է քաշում բոլոր այն գաղափարները, որ կարող են օգնել փակուղային իրավիճակը հաղթահարելուն։ Ակնհայտ է, որ «ուղեղային գրոհը» կարող է արդյունավետ լինել նաև սոցիալական կոնֆլիկտների կարգավորման գաղափարների որոնման պրոցեսում։

Սոցիալական կոնֆլիկտների կարգավորման ամերիկյան հետազոտություններում առավել ուշագրավ են գործնական այն հանձնարարականները, որոնք ձևակերպվել են տեսական ուսումնասիրությունների և կոնֆլիկտների կարգավորման հարուստ փորձի հիման վրա։ Ստորև ներկայացնենք սոցիալական կոնֆլիկտների կարգավորման որոշակի քայլերի հաջորդականությունը՝ հենվելով Գ. Վեհրի և Ս. Բերկովիչի հանձնարարականների վրա.

1. Հետազոտվող կոնֆլիկտի նախնական ընդհանուր սխեմայի («քարտեզ») կազմում։

2. Կոնֆլիկտի միջնորդական կարգավորման ձեռնարկումից առաջ պարզել՝

ա) արդյոք կոնֆլիկտի նախնական սխեմատիկ բնութագրի հիման վրա կարելի՞ է եզրակացնել, որ երրորդ կողմի միջնորդությունը արդասաբեր կլինի,

բ) արդյոք միջնորդության թեկնածուները բավարա՞ր վստահություն են վայելում հակամարտող ուժերի մոտ,

գ) արդյոք արդարացված չէ՞ միջնորդությունը տվյալ կոնֆլիկտի այն ասպեկտով սահմանափակելը, որի կարգավորումը առավել հեռանկարային է գիտվում,

դ) արդյոք դեռ շուտ չէ՞ կամ էլ արդեն ուշ չէ՞ տվյալ կոնֆլիկտի կարգավորման համար երրորդ կողմի միջամտությունը,

3. Միջնորդության մուտք։

Ըստ Գ. Վեհրի, միջնորդող կողմի մուտքը տվյալ կոնֆլիկտը կարգավորելու նպատակով պետք է ընթանա երկու նշանաբանով.

Միջնորդող կողմի հանդեպ բոլոր հակամարտող ուժերի կողմից վստահության ապահովումը։ Ընդ որում, այդ վստահությունը պետք է հենվի ոչ միայն միջնորդի բարոյական հատկանիշների, այլ նաև նրա՝ որպես կոնֆլիկտներ կարգավորելու փորձագետի, կարողությունների և հեղինակության վրա։

բ) Բացահայտ անկողմնակալություն, որը պետք է գիտակցվի բոլոր հակամարտող ուժերի կողմից. բոլորին պետք է միանգամայն պարզ լինի, որ միջնորդող կողմի միակ շահագրգռվածությունը կոնֆլիկտի արդար կարգավորումն է։

4. Ստեղծել հակամարտող կողմերի բանակցությունները սկսելու և վարելու առավել բարենպաստ պայմաններ։ Բանակցությունների համար պետք է այնպիսի տեղ և միջավայր ունենալ, որ հակամարտող կողմերը հնարավորին չափ վերանան կոնֆլիկտային վիճակից և կոնֆլիկտի արդյունքով ձևավորված միակերպ վարքից ու մտածելակերպից։ Այդ կապակցությամբ Ս. Բերկովիչը գրում է. «Երրորդ կողմը չի կարող իրագործել իր նպատակներից ոչ մեկը և չի կարող կատարել միջնորդի իր դերը, եթե նախօրոք ձեռք չառնվեն սոցիալական և ֆիզիկական անհրաժեշտ միջոցառումներ։

Անհատները և մարդկային խմբերը կոնֆլիկտային իրավիճակներում հակված են կատարելու այնպիսի դերեր, որոնք համապատասխանում են կոնֆլիկտի իրավիճակին և հոգեբանական կլիմային։ Եթե բանակցությունների իրավիճակը միաժամանակ և՛ պաշտոնական բնույթ է կրում, և՛ նման է կոնֆլիկտի արդյունքով ստեղծված իրավիճակին, ապա հակամարտող կողմերը կգտնվեն ուժեղ ճնշման տակ, ստիպված կլինեն գործել կոնֆ-

ֆիկտի ընթացքում ձևավորված նորմերի շրջանակներում, կշարունակեն կրկնել շաբլոն մեղադրանքները և արդարացնել պաշտոնապես արտահայտած իրենց տեսակետները»[31]։ Իսկ եթե բանակցություններ վարելու համար ստեղծվել են այնպիսի պայմաններ և բարոյական այնպիսի մթնոլորտ, որոնք օգնում են հակամարտող կողմերին դուրս գալ կոնֆլիկտին բնորոշ ճնշման և լարման ազդեցությունից, ապա կոնֆլիկտում ներգրավված ուժերը հնարավորություն են ստանում կենտրոնանալ կոնֆլիկտի վերլուծության և հաղթահարման վրա։

5. Կոնֆլիկտների կարգավորման հետազոտական մոտեցման համաձայն, հակամարտող կողմերի միջև բանակցությունները պետք է տեղի ունենան անմիջականորեն այդ կողմերի ներկայացուցիչների միջև և կրեն ոչ պաշտոնական բնույթ։ Ակնհայտ է, որ առանց «դեմ դիմաց» քննարկումների հնարավոր չէ հասնել հակամարտող կողմերի տեսակետների բավարար չափով մերձեցմանը և երկու կողմերի համար էլ ընդունելի լուծումների մշակմանը։

6. Հակամարտող կողմերի միջև բանակցությունները պետք է տարվեն այնպիսի հունով, որ տեղ չտրվի կոնֆլիկտաբեր հռետորությանը, և զարգացվի ու ամրապնդվի հետազոտական համաբարձակցման միտումը։ Բանակցությունների ընթացքում հնարավորին չափով պետք է խուսափել պաշտոնական դիրքորոշումներից և պաշտոնական առաջնորդներից։ Ի տարբերություն ավանդական բանակցությունների, սոցիալական կոնֆլիկտների կարգավորման հետազոտական մոտեցումը տրամադրում է ավելի ճկուն ստեղծագործական վարվելակերպի, ֆունկցիոնալ համագործակցության։

7. Վերահսկող հանձնաժողովի ստեղծում, որը պետք է հետևի կոնֆլիկտի կարգավորման նպատակով բանակցությունների ընթացքում մշակված և ընդունված որոշումների կատարմանը։ Միայն այդ որոշումների կատարումից և կոնֆլիկտի իրական վերացումից հետո կարելի է ընդունել, որ տվյալ կոնֆլիկտի կարգավորմանը նվիրված ջանքերը ավարտվեցին հաղթանակով։

Այսպիսով, սոցիալական կոնֆլիկտները հետազոտական մոտեցման եղանակով կարգավորելու դեպքում միջնորդող կողմից պահանջվում է՝

ա) հակամարտող կողմերին ըմբռնելու կարողություն, իմարկե, բացառելով կողմերից մեկի ազդեցության տակ ընկնելը և կողմնակալության դրսևորումը,

բ) հակամարտող կողմերին «լսելու» կարողություն, որի շնորհիվ միջնորդը ձեռք է բերում նրանց վստահությունը և օժանդակում է թշնամանքի թուլացմանը,

գ) «ժամանակի զգացում», որի շնորհիվ երրորդ կողմը որոշում է կոնֆլիկտին միջամտելու և արդյունավետ բանակցություններ սկսելու առավել հարմարավետ պահը,

դ) բուն իմաստով միջնորդելու կարողություն, որը ենթադրում է բանակցությունների պլանավորում, առաջ քաշվող գաղափարների հստակ ձևակերպում, փոխզիջումների մղելու կարողություն և այլն,

ե) ստեղծագործական միտք և երևակայություն, որոնք հատկապես կարևոր են բանակցությունների ընթացքում առաջացող փակուղային իրավիճակների հաղթահարման համար,

զ) հաղորդակցման կարողություն, այդ թվում նաև հակամարտող կողմերի միջև հստակ հաղորդակցման ապահովում,

է) միջնորդող կողմի պրոֆեսիոնալիզմ, որը պահանջում է համատեղել հետազոտողի, ղեկավարի և կազմակերպչի կարողությունները։

Սոցիալական կոնֆլիկտների կարգավորմանը նվիրված գործնական հանձնարարականները ռազմավարական բնույթ են կրում, քանի որ վերա-

---

[31] J. Bercovitch, Social conflicts..., p. 28.

բերում են սոցիալական կոնֆլիկտների կարգավորման գործընթացի ընդհանուր փուլերին և այդ քայլերը իրագործելու համար անհրաժեշտ կարողություններին։ Դրանց հետ մեկտեղ, ամերիկյան սոցիոլոգները մշակել են մի շարք նուրբ և հետաքրքիր մարտավարական հանձնարարականներ, որոնք առավել համակարգված ձևով առկա են Դեբորա Կոլդի սոցիալական կոնֆլիկտների կարգավորման «դրամատուրգիական» կոնցեպցիայում[22]։ Այդ մարտավարական հանձնարարականներից թերևս առավել ուշագրավը հետևյալներն են.

ա) միջնորդ-մասնագետը հակամարտող կողմերի վրա հենց առաջին հանդիպման ժամանակ պետք է թողնի լուրջ և հմուտ, տվյալ կոնֆլիկտների ասպարեզում գիտակ պրոֆեսիոնալի տպավորություն։

բ) Պահպանելով չեզոքությունը հակամարտող կողմերի նկատմամբ, որոշակի հարցերի կապակցությամբ միջնորդը կարող է մասնավոր զրույցում այդ կողմի դիրքորոշումը լրիվ ընդունել, որի միջոցով շահում է համապատասխան կողմի վստահությունը։

գ) Միջնորդ կողմը մշտապես պետք է հոգ տանի, որպեսզի հակամարտող կողմերի կարծիքում ձևավորվի և պահպանվի իր՝ միջնորդի, որպես մասնագետի և հասարակական գործչի բարձր հեղինակությունը, որի նպատակով ինքը՝ միջնորդը, պետք է համապատասխան ինֆորմացիա հաղորդի հակամարտող կողմերին։

Այսպիսով, ամերիկյան սոցիալ-փիլիսոփայական պատմությունը վկայում է, որ ամերիկյան գիտնականներին հաջողվել է ստանալ մի շարք կարևոր արդյունքներ ինչպես սոցիալական կոնֆլիկտների էության հետազոտության, այնպես էլ դրանց կարգավորման տեսության ասպարեզում։ Հատկապես ուսանելի են պետական կարգավորման միջոցով հասարակության սոցիալ-տնտեսական կայունության ապահովման ընդհանուր սկզբունքը և երրորդ կողմի միջոցով սոցիալական կոնֆլիկտների կարգավորման տեսությունը։

ТЕОРИЯ КОНФЛИКТОВ В ИСТОРИИ АМЕРИКАНСКОЙ СОЦИОЛОГИЧЕСКОЙ МЫСЛИ

А. Р. ДЖИДЖЯН

Резюме

Теория социальных конфликтов и методов их регулирования в истории американской философской и социологической мысли XX века добилась очень важных результатов как на общетеоретическом, так и на прикладном уровнях. В общетеоретическом плане главным итогом можно считать разработку и детальное обоснование идеи обеспечения социально-политической стабильности общества путем государственного регулирования глобальных социально-экономических противоречий на базе реформирования и изменения соответствующих законов. В практическом плане в течение последних двух десятилетий в США получило громадное развитие движение по регулированию трудовых, семейных, международных и т. д. конфликтов с участием третейской стороны.

---

[22] D. Kold, To be a Mediator (Journal of Social Issues, vol. 41, 1985, № 2, pp. 11—26).